

Հարգելի հաճախորդ,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ վերջին շրջանում Հայաստանում գրանցվել են միջազգային փոխանցումների հետ կապված զեղծարարության փորձեր, որոնք իրականացվում են հետևյալ կերպ՝

Հաքերների կողմից էլեկտրոնային փոստի միջոցով բիզնես գործընկերների անունից հաճախորդներին կեղծ նամակներ են ուղարկվում, որոնցում նշվում է, որ վճարումը անհրաժեշտ է իրականացնել նոր՝ կեղծված բանկային ռեկվիզիտներով:

Այդ կապակցությամբ, խորհուրդ ենք տալիս լինել առավել ուշադիր.

Այն դեպքում, երբ Ձեր գործընկերը միջազգային դրամական փոխանցում կատարելու համար Ձեզ տրամադրում է նոր բանկային տվյալներ, կապ հաստատեք վերջինիս հետ նախկինում Ձեզ հայտնի հեռախոսահամարներով, համոզվեք փոփոխության իսկության մեջ և այնուհետև իրականացրեք գործարքը: